European Bank
for Reconstruction and Development

# «Մասրիկ-1» Արևային էլեկտրակայան

| | |
|---|---|
| Երկիր՝ | ՀԱՅԱՍՏԱՆ |
| Ծրագրի համար՝ | 50022 |
| Բիզնես ոլորտ՝ | Էներգետիկա, Եվրասիա |
| Ծանուցման տեսակ՝ | Մասնավոր |
| Բնապահպանական դասակարգ՝ | B |
| Թիրախային խորհրդի հաստ. ամսաթիվ՝ | Հուլիսի 20, 2022 |
| Կարգավիճակ՝ | Հայտեցակարգը վերանայվել է |
| Ծրագրի ամփոփ փաստաթղթի (ԾԱՓ-PSD) հրապարակման ամսաթիվ՝ | Հունիս 20, 2022 |

## Ծրագրի նկարագրություն

Մինչև 35.4 ԱՄՆ դոլարի չափով երկարաժամկետ պարտավարության ֆինանսավորում՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) հետ համատեղ՝ ուղղված ՀՀ Գեղարքունիքի մարզի Մասրիկ քաղաքում 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի նախագծման, կառուցման և շահագործման համար: ՎԶԵԲ-ը կտրամադրի դրամաշնորհային ֆինանսավորում՝ այն մոբիլիզացնելով Եվրոպական Միության հարևանության ներդրումային պլատֆորմի(NIP) միջոցով՝ ծրագրին աջակցելու նպատակով:

## Ծրագրի նպատակները

Ծրագիրը խթանում է Բանկի «Կանաչ տնտեսության անցումային մոտեցումը» և աջակցում է ՀՀ կառավարության կողմից ցածր ածխածնի արտադրության խթանման ռազմավարությանը ՝ առաջարկելով Հայաստանի էներգետիկ համասարակշռության համար ավելի էժան ու մաքուր էներգիայի աղբյուր և բացահայտելով երկրի վերականգնվող էներգետիկիայի ներուժը՝ արևային էներգիայի արտադրության ոլորտը Հայաստանում հզորացնելու ճանապարհով:

# Անցումային ազդեցություն

Անցումային ազդեցության կանխատեսելի միավորը՝ 80

Անցումային ազդեցությունը պայմանավորված է ՎԶԵԲ-ի «Անցում կանաչ տնտեսությանը» (ԱԿՏ) մոտեցմանը նախագծի հնարավոր ներդրումից, քանի որ այն թույլ կտա էլեկտրաէներգիա արտադրել՝ օգտագործելով արևային ճառագայթումը, ինչը կհանգեցնի ՋԳ արտանետումների նվազմանը:

# Պատվիրատուի մասին տեղեկություն

«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ
«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» Փակ բաժնետիրական ընկերությունը հատուկ նշանակությամբ ընկերություն է (SPV), որը հիմնվել է 55 ՄՎտ հզորությամբ «Մասրիկ» արևային ֆոտովոլտային կայանի նախագծման, կառուցման և շահագործման համար:
Ընկերության 75% -ը պատկանում է «FRV La Providencia ՍԼ»-ին և 25% -ը պատկանում է «FSL Solar, S.L.»-ին:

# ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

17,702,000.00 ԱՄՆ դոլար

# Ծրագրի ընդհանուր արժեքը

54,692,050.00 ԱՄՆ դոլար

# Բնապահպանական և սոցիալական ամփոփում

Ծրագիրը դասակարգվել է որպես «B» կարգի ծրագիր՝ համաձայն ՎԶԵԲ-ի 2014 թ.-ի ԲևՍ քաղաքականության: Բնապահպանական և սոցիալական ռիսկերն ու ազդեցությունները, որոնք կապված են դաշտում տեղակայված 55 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի շինարարության և շահագործման հետ և ցանցի միացման T-աձև գծի հետ, գնահատվել են որպես անկախ միջազգային խորհրդատուի կողմից իրականացվող «Բնապահպանական և սոցիալական համապատասխանության» հետազոտության մաս (ESDD), և դրա ազդեցությունները համապատասխանաբար կմեղմացվեն «Բնապահպանական և սոցիալական գործողությունների» ծրագրով (ESAP):

«Բնապահպանական և սոցիալկան համապատասխանության» անկախ ուսումնասիրությունը (ESDD) հաստատել է, որ ծրագիրը համապատասխանում է երկրի բնապահպանական, առողջապահական և սոցիալական օրենսդրությանը և կազմված է այնպես, որ բավարարի Բանկի կատարողականի պահանջները (ԿՊ)՝ ԲևՍ

կառավարման լավ փորձի և կառավարման համակարգերի կիրառման, «Բնապահպանական և սոցիալական գործողությունների» (ESAP) ներդրման և շարունակական մոնիտորինգի միջոցով:

Բնապահպանական և սոցիալական հնարավոր բացասական ազդեցությունները կապված են հիմնականում շինարարության, առողջության, անվտանգության և սոցիալական չափանիշների և կարողությունների, հողի օգտագործման և կենսաբազմազանության կառավարման հետ:

Հաշվի առնելով, որ ծրագիրը գտնվում է Սևանա լճի Ռամսարի շրջանում (միջազգային կարևորության ջրային տարածք, որը հիմվել է 1993-ին), իրականացվել է կենսաբազմազանության համապարփակ գնահատում: Կատարված գնահատումը կրիտիկական բնակմիջավայրեր չի առանձնացրել և հաստատել է, որ կենսաբազմազանության վրա ազդեցությունները կլինեն նվազագույն, ինչպես նաև ծրագիրը նվազագույն բացասական ազդեցություն կունենա Ռամսար տեղանքի կոնսերվացիայի նպատակների և ամբողջականության պահպանման տեսանկյունից: Հարցման արդյունքները հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության Ռամսարի կոնվենցիայի իրավախորհրդատուի կողմից:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ իրականացվել է ազգային «EIA»՝ բնապահպանական ազդեցության գնահատման մշակում, ինչպես նաև շահագրգիռ կողմերի ներգարվվմամբ անց են կացվել հասարակական խորհրդատվություններ՝ ներառյալ Ռամսար տեղանքի կարգավիճակի վերաբերյալ: Բնապահպանական ազդեցության տեղական գնահատումը ներառում է պահպանվող տարածքի վրա ծրագրի հետ կապված ազդեցությունների գնահատումը, որն իրականացվել է ազգային օրենսդրության համաձայն և առաջարկվող ծրագրի շրջանակներում պահպանվող տարածքների պատասխանատուների, համապատասխան իշխանությունների, տեղական համայնքների և այլ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելությամբ՝ ԿՊ 10-ին համահունչ: Հաճախորդը կիրականացնի լրացուցիչ ծրագիր՝ խթանելու և նպաստելու պահպանվող տարածքի կոնսերվացիայի նպատակները, մասնավորապես, արհեստական վերարտադրությամբ վերականգնելու Սևանա լճի առանցքային տեսակների պոպուլյացիան՝ Capoeta capoeta sevangi de Filippi, 1865 (Սևան Կողակ) էնդեմիկ ձկան տեսակը:

Բացի այդ, որպես նախազգուշական միջոց, հաճախորդը պարտավորվել է նաև իրականացնել թռչունների համար հարմար սյուների և գծերի դիզայն՝ կանխելու թռչունների հավանական բախումը/էլեկտրական հարվածը: Հաճախորդը կշարունակի վերահսկել թռչունների անկումը և անհրաժեշտության դեպքում իրականացնել լրացուցիչ մեղմացնող միջոցառումներ: Խորհրդակցելով իրավասու մարմինների հետ՝ Բնապահպանական և սոցիալական համապատասխանության ուսումնասիրությունը (ESDD) հանգել է այն եզրակացության, որ ծրագրի տեղանքը չի գտնվում պահպանման տակ գտնվող կոսերվացիայի կարգավիճակ ունեցող այլ տարածքներում:

Սոցիալական և հողային ազդեցությունները կառավարելու նպատակով նախագծողի կողմից մշակվել և ընկերության և վարկատուների միջև համաձայնեցվել է Հողի

օտարման և կենսամիջոցների վերականգնման գործողությունների ծրագիր (LRP), Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան (SEP), որը ներառում է բողոքների լուծման մեխանիզմ և գենդերային ռազմավարություն: Ընկերությունը կներկայացնի Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագիր («ԿՍՊՊ»)՝ ուղղված տեղական համայնքի զարգացմանը և առաջնահերթ կարիքների լուծմանը:

Բնապահպանական և սոցիալական գնահատման ծրագրում (ESAP) ներառված բնապահպանական և սոցիալական կառավարման այլ բարելավումները ներառում են, ի թիվս այլոց, ճկուն EHS կառավարման համակարգի ստեղծումը և բնապահպանական ու սոցիալական կառավարման համակարգի իրականացումը, որը կկիրառվի EPC կապալառուի կողմից, Բնապահպանական և սոցիալական կառավարման ու մոնիտորինգի պլանի իրականացումը, որը մշակվել է հատուկ Ծրագրի համար և անդրադառնում է այնպիսի տարբեր ասպեկտների, ինչպիսիք են աշխատուժի աշխատանքային ու բարեկեցության պայմանները, թափոնները, ջուրը, աղմուկի և օդի արտանետումների կառավարումը, հրդեհի և արտակարգ իրավիճակների դեպքերին արձագանքը, երթևեկության կառավարումը, վտանգավոր նյութերի մշակումը, աշխատանքի և սոցիալական հարցերի կառավարումը, աշխատակիցների համար բողոքների լուծման մեխանիզմը, և այլն:

Բանկը վերահսկելու է Ծրագրի կատարումը վարկառուների ինժեներական հաշվետվությունների և բնապահպանական ու սոցիալական ամենամյա զեկույցների (AESR) միջոցով:

Ծրագրի համար պատրաստվել է ոչ տեխնիկական ամփոփագիր (NTS), որը հասանելի է ստորև նշված հղումով:

## Կոնտակտային տվյալներ

Բռունո Մարինյո
bruno.marinho@frv.com
+34913191290
http://frv.com
C/ María de Molina, 40, 7th Floor, Madrid, Spain, 28006

ԾԱՓ-ի ամենավերջին թարմացումը՝

Հունիսի 22, 2022 թ.

## Ընդհանուր հարցումներ

Հատուկ հարցումները կարող են կատարվել՝ օգտագործելով EBRD հարցումների ձևը:

## Անցման գործընթացի ըմբռնումը

Անցումային ազդեցության չափման ՎԶԵԲ-ի մոտեցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն հասանելի է այստեղ:

### Գործնական հնարավորություններ

Գործնական համագործակցության կամ գնումների համար՝ կապվեք պատվիրատուի ընկերության հետ:

ՎԶԵԲ-ի մասին հարցումներ, որոնք կապված չեն գնումների հետ՝
Հեռ. +44 20 7338 7168

Էլ.հասցե՝ projectenquiries@ebrd.com

Պետական հատվածին վերաբերող ծրագրերի համար, այցելեք ՎԶԵԲ-ի գնումների էջ.

Հեռ. +44 20 7338 7168

Էլ.հասցե՝ projectenquiries@ebrd.com

## Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ESP)

ESP-ն և հարակից Կատարողական պահանջները (PR-ները) սահմանում են այն ուղիները, որոնցով ՎԶԵԲ-ն իրականացնում է «էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը» խթանելու իր հանձնառությունը: ESP-ն և PR-ները ներառում են հատուկ դրույթներ հաճախորդների համար՝ համապատասխանելու հանրային տեղեկատվության և խորհրդատվության վերաբերյալ ազգային օրենքների կիրառելի պահանջներին, ինչպես նաև ստեղծելու բողոքարկման մեխանիզմ՝ ստանալու և հեշտացնելու շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները, մասնավորապես՝ հաճախորդի կամ ծրագրի բնապահպանական ու սոցիալական գործունեության վերաբերյալ: Ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթին և մասշտաբին համաչափ, ՎԶԵԲ-ը նաև պահանջում է իր հաճախորդներից, ըստ անհրաժեշտության, հրապարակել տեղեկատվություն նախագծերից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ ձեռնարկել բովանդակալից խորհրդակցություններ շահագրգիռ կողմերի հետ և քննարկել ու արձագանքել նրանց կարծիքներին:

Այս առնչությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի մասին լրացուցիչ տեղեկություններ ներկայացված են ESP-ում:

## Պատշաճություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի Համապատասխանության գծով գլխավոր տնօրենի գրասենյակը (OCCO) խթանում է արդյունավետ կառավարումը և ապահովում է անաչառության ամենաբարձր չափանիշների կիրառումը Բանկի գործունեության յուրաքանչյուր ոլորտում՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան: Բանկի բոլոր հաճախորդների նկատմամբ իրականացվում է անաչառության պատշաճ ուսումնասիրություն՝ հավաստիանալու, որ ծրագրերը Բանկի համար անաչառության կամ հեղինակության տեսանկյունից վտանգ չեն ներկայացնում: Բանկը կարծում է, որ ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների բացահայտումն ու լուծումը Բանկի գործարքների անաչառությունն ապահովելու ամենաարդյունավետ

միջոցն է: OCCO-ն առանցքային դեր է խաղում պաշտպանական այս ջանքերում, ինչպես նաև օգնում է վերահսկել անաչառության ռիսկերը հետներդրումային ծրագրերում:

OCCO-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում խարդախության, կոռուպցիայի և անընդունելի վարքագծի վերաբերյալ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած ոք, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, ով կասկածվում է խարդախության կամ կոռուպցիայի մեջ, պետք է գրավոր հաշվետվություն ներկայացնի համապատասխանության գծով գլխավոր տնօրենին էլեկտրոնային փոստով՝ compliance@ebrd.com հասցեով: Զեկույցում ներկայացված բոլոր հարցերը կարգավորվելու և հետագայում հսկվելու են OCCO-ի կողմից: Բոլոր զեկույցները, ներառյալ անանունները ենթարկվում են ուսումնասիրության: Հաշվետվությունները կարող են կազմվել Բանկի կամ Բանկի գործունեության երկրների ցանկացած լեզվով: Անհարաժեշտ է տեղեկատվությունը տրամադրել հնարավորինս բարեխղճորեն:

## Տեղեկատվության հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ-AIP)

ՏՀՔ-ն, որն ուժի մեջ է մտել 2020թ. հունվարի 1-ից, սահմանում է ՎԶԵԲ-ի կողմից տեղեկատվության տարածման և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելու կարգը, որպեսզի խթանի իր ռազմավարության, քաղաքականության և գործառնությունների վերաբերյալ արդյունավետ իրազեկումը և ըմբռնումը:
Խնդրում ենք այցելել «Տեղեկատվության հասանելիության քաղաքականության» էջը՝ պարզելու, թե ինչ տեղեկատվություն է հասանելի ՎԶԵԲ-ի կայքից:

Տեղեկատվության հատուկ հարցումներ կարող են կատարվել՝ օգտագործելով EBRD հարցումների ձևը:

## Ծրագրի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ-IPAM)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական, սոցիալական կամ հանրային մտահոգությունները լուծելու ջանքերն անհաջող են (օրինակ՝ Հաճախորդի համար նախատեսված ծրագրային մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական մասնակցության միջոցով), անհատները և կազմակերպությունները կարող են փորձել լուծել իրենց մտահոգությունները ՎԶԵԲ-ի ծրագրի անկախ հաշվետվողականության մեխանիզմի (ԾՀԱՄ) միջոցով:

ԾՀԱՄ-ն անկախ կերպով ուսումնասիրում է Ծրագրի խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ կարող են պատճառել): Մեխանիզմի նպատակն է աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը բնապահպանական, սոցիալական և հանրային նշանակության խնդիրները լուծելու համար, որոշել, թե արդյոք Բանկը հետևել է իր Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ Տեղեկատվության հասանելիության քաղաքականության

ծրագրային հատուկ դրույթներին և, անհրաժեշտության դեպքում, շտկել այս քաղաքականության հետ առկա ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի կողմից ապագա անհամապատասխանությունները:

Խնդրում ենք այցելել Ծրագրի անկախ հաշվետվողականության մեխանիզմի վեբ էջը՝ ԾՀԱՄ-ի և դրա մանդատի մասին ավելին իմանալու համար. ինչպես հարցում ներկայացնել ուսումնասիրության համար, կամ կապվեք ԾՀԱՄ-ի հետ ipam@ebrd.com էլ.փոստով՝ ԾՀԱՄ-ի վերաբերյալ ուղեցույց և լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ հարցում ներկայացնելու համար: